ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ -290 -2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «03» «07» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՄԵՆՔ» պետական և ազգային արժեքների հանրահռչակման հիմնադրամը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Պ. Սարգսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման (տող՝ «Աջակցություն պետական և ազգային տոներին նվիրված նախագծերին») (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և պետական խորհրդանշանների օրվան նվիրված տոնական միջոցառում» նախագծի կազմակերպումը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,
2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,
2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,
2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:
2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝
2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,
2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,
2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,
2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:
2.3. Պետական մարմինը պարտավոր է՝
2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,
2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,
2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,
2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են

կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է 28445,2 հազար (քսանութ միլիոն չորս հարյուր քառասունհինգ հազար երկու հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. հուլիսի 6-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից

չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ. կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«ՄԵՆՔ» պետական և ազգային արժեքների հանրահռչակման հիմնադրամ
Երևան, Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Արգիշտի փող., 7/4 շ., բն. 35
Կառավարական տուն N 2	«Ամերիաբանկ» ՓԲԸ 1570023457320100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	հվհհ 02646398, հեռ.՝ 093999390
հ/հ 900011032878, հվհհ 02698732	Գլխավոր տնօրենի ժ/պ՝
Գլխավոր քարտուղար՝	---------- Պ. Սարգսյան
---------- Հ. Հանոբյան	(ստորագրություն)
(ստորագրություն)	Կ. Տ.
Կ. Տ.	

Հավելված N 1
«03» «07» 2023 թ.
N ՄՇԴ-290-2023 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և պետական խորհրդանշանների օրվան նվիրված տոնական միջոցառում» նախագծի

1	Կազմակերպության անվանում	«Մենք» պետական և ազգային արժեքների հանրահռչակման հիմնադրամ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, ք. Երևան, Արգիշտի փողոց 7/4 շենք, բն. 35
3	Ծրագրի անվանում	Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և պետական խորհրդանշանների օրվան նվիրված տոնական միջոցառում
3.1	Բովանդակություն	Հուլիսի 5-ին իրականացվելու է ՀՀ սահմանադրության և ՀՀ պետական խորհրդանշանների օրվա տոնական ծրագիր: Տոնական օրվա առանցքային իրադարձությունն ավանդական դարձած քայլերթն է, ինչպես նաև տարբեր ձևաչափերի այլ միջոցառումներ: Երևանի 2750-ամյակին նվիրված շատրվանների այգում նախատեսվում է տեղադրել ՀՀ պետական զինանշանի պատկերով մեծ փազլ (3մx3մ), որը հավաքվելու է քաղաքացիների կողմից: Տոնական օրը այս տարի նախատեսվում է սկսել գիշերային վազքի մարաթոնով, որի մեկնարկը կլինի հուլիսի 5-ին՝ ժամը 00:00-ին՝ Հանրապետության հրապարակի ժամացույցի վերջին գոնգով: Վազքի մարաթոնը կմեկնարկի Հանրապետության հրապարակից, Վազգեն Սարգսյանի փողոց, Շահումյանի անվան հրապարակ, կրկին մուտք Վազգեն Սարգսյանի փողոց, Հանրապետության հրապարակ, այնուհետև Նալբանդյան փողոց, Թումանյան փողոց, Աբովյան փողոց և ավարտը Հանրապետության հրապարակ, այս երթուղու մեկ շրջանը 2,5 կիլոմետր է, մարաթոնը կազմակերպվում է 2,5 և 5 կիլոմետր սահմանչափով: Բոլոր մասնակիցներին կտրամադրվի ռեֆլեկտոր ժապավենով շապիկներ, փարոսիկներ՝ կարմիր, կապույտ կամ նարնջագույն: Վազքի մարաթոնի մասնակիցների գրանցումը լինելու է նախապես՝ օնլայն տարբերակով: Նախատեսվում է մոտ 300 հոգու մասնակցություն: Հուլիսի 5-ին՝ ժամը 12:00-ին, Շահումյանի անվան հրապարակում տեղի կունենա կարմիր, կապույտ, նարնջագույն փոշե ներկերով «Վարդավառ», որտեղ մասնակիցների մուտքը լինելու է միայն սպիտակ շապիկներով, ովքեր փոշե ներկերի միջոցով միմյանց ներկելու են: Միջոցառման այս հատվածում նախատեսվում է մոտ 400 մասնակից: Ժամը 18:30-19:00-ի սահմաններում Երևան քաղաքի երեք հատվածներից մեկնարելու է երեք քայլերթներ՝ կարմիր, կապույտ և նարնջագույն: Քայլերթները տանելու են մեծ կարմիր, կապույտ և նարնջագույն դրոշները՝ յուրաքանչյուրը 26մx4,3մ չափսերով: Կարմիրը՝ Ծիծեռնակաբերդից, Կապույտը՝ Մատենադարանից, Նարնջագույնը՝ Սասունցի Դավթի հարապարակից, բոլոր գույները կմոտենան Ազատության հրապարակ, որտեղից էլ 19:30 կմիանան հիմնական քայլերթին և Հանրապետության հրապարակի գորգին կամբողջանան 26մ x13մ չափսերով մեծ եռագույն դրոշ դառնալով: Ժամը 19:30-ին կմեկնարկի ավանդական տոնական քայլերթը: Միջոցառմանը կմասնակցեն ինչպես ՀՀ մարզերից, Երևանի վարչական շրջաններից, այնպես էլ՝ Ջավախքից, Արցախից, Սփյուռքից ժամանած պատանիներ և երիտասարդներ (4,000-6,000 մասնակից):

		Տոնական քայլերթին կմասնակցեն՝ ՀՀ ՊՆ ԳՇ և ՀՀ ոստիկանության նվագախմբերը և պատվո պահակային վաշտերը, «Երևանյան թմբուկներ» թմբկահարուհիների խումբը, ՀԲԸՄ Երևանի սկաուտական փողերախումբը, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կուրսանտները, զինվորական վաշտ, դիոլահարների խմբեր, պարային համույթներ, ՀՀ ոստիկանության մոտոցիկլավարները, հեծանվորդներ, դրոշակակիրներ և ՀՀ ՊՆ ԳՇ ուղղաթիռ, որին ամրացված կլինի եռագույնը: Տոնական քայլերթը կմեկնարկի Ազատության հրապարակից և կանցնի Մաշտոցի պողոտայով, Ամիրյան փողոցով մուտք կգործի Հանրապետության հրապարակ, ավարտվելով ժամը 20:00-ի սահմաններում, որից հետո Հանրապետության հրապարակում կմեկնարկի հայկական ազգային պարերի կատարումներ և տոնական համերգ՝ հայ արտիստների մասնակցությամբ, որը կավարտվի 22:00-ի սահմաններում:
3.2	Նպատակ	«Մենք» հիմնադրամի գլխավոր նպատակն է երիտասարդների շրջանում տարածել ՀՀ պետական խորհրդանշանների ճանաչման և արժևորման գաղափարախոսությունը: Տոնակատարության նպատակն է բոլոր մասնակիցներին համախմբել ՀՀ պետական խորհրդաշանների շուրջ: ՀՀ պետական խորհրդանշանների ճանաչման և արժևորման գաղափարախոսությունը, գիտակցումը հարկավոր է ձևավորել և ամրապնդել երեխաների, պատանիների, երիտասարադների շրջանում: Պատշաճ վերաբերմունք ձևավորել պետական խորհրդանշանների նկատմամբ: Տոնակատարության շրջանակներում միմյանց կողք-կողքի քայլող, եռագույն դրոշը ծածանող, եռագույն շապիկը կրող անհատները՝ պետական խորհրդանշանների շուրջ համախմբված խմբերը, միասնականության, պետականության շուրջ համախմբված և զարգացումն ապահովող ապագա անհատներն են: Մեծաքանակ քայլերթները վերաարժևորում և միասնականության ուժն են հաղորդում մասնակիցներին՝ հայրենասիրական ոգին բարձրացնում:
3.3	Անցկացման ժամկետ	2023 թ.,Հուլիսի 5
3.4	Անցկացման վայր	ք. Երևան
3.5	Ակնկալվող արդյունքներ	Տարիների փորձը և ուսումնասիրությունները հիմնավորում են այն պնդումը, որը ռազահայրենասիրական, տոնական մեծամասշտաբ մարդկանց մասնակցությամբ միջոցառումները ձևավորում և վերահմաստավորում են պետականության նկատմամբ վերաբերմունքը, զարգացնում գիտակցությունը և պատշաճ վերաբերմունքը պետականության և պետական խորհրդանշանների հանդեպ: 2010-2022թթ. ընթացքում իրականացված տոնական քայլերթները և համերգային ծրագրերը տարեց տարի բազմամարդ են դառնում՝ ընդրգկելով ավելի մեծ հասարակական խմբեր:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Տոնական քայլերթ՝ 4 000-6 000 մասնակից

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«ՄԵՆՔ» պետական և ազգային արժեքների
հանրահռչակման հիմնադրամ
ք. Երևան, Արգիշտի փող., 7/4 շ., բն. 35
«Ամերիաբանկ» ՓԲԸ 1570023457320100
հվհհ 02646398, հեռ՝ 093999390
Գլխավոր տնօրենի ժ/պ՝
---------- Պ. Սարգսյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 2
«03» «07» 2023 թ.
N ՄՇԴ-290-2023 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և պետական խորհրդանշանների օրվան նվիրված տոնական միջոցառում» նախագծի կազմակերպման ծախսերի

N	Ծախսատեսակի անվանումը	Միավոր	Քանակը	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Տոնական քայլերթի կազմակերպման ծառայություններ**				**11797.5**
	Տոնական քայլերթի համար պարագաներ (դրոշների կտոր (կարապ), կար և ձող (2 մ x 1 մ)՝ 250 հատ, դրոշների կտոր (կարապ), կար և ձող (1 մ x 0,5 մ)՝ 500 հատ, 1 հատ մեծ դրոշ՝ 26 մ x 13 մ, եռագույն շապիկներ (S, M, L, XL)՝ 1800 հատ Տրանսպորտ (ավտոբուսներ ՀՀ մարզերից մասնակիցների տեղափոխման համար՝ 11 հատ) Տպագրություն՝ 110 քառ. մ	հատ	1	11797500	11797.5
2	**Վազքի մարաթոնի կազմակերպման ծառայություններ**				**1020.0**
	Վազքի անթև շապիկ, ռեֆլեկտոր ժապավենով և տպագրությունով՝ 300 հատ, փարոսիկ (կարմիր, կապույտ, նարնջագույն)՝ 300 հատ, Գրանցման համակարգի, կայքի պատրաստում՝ 1 հատ	հատ	1	1020000	1020.0
3	**Երևանի 2750 ամյակին նվիրված այգում ՀՀ պետական զինանշանի փազլ (3 մ x 3 մ) պատրաստման ծառայություններ**				**3316.8**
	Մետաղական կոնստրուկցիաներ՝ 70 հատ, դեկորատիվ փազլ (ՊՎՔ սալ 5 մմ)՝ 800 հատ, դեկորատիվ ՊՎՔ սալ 3 մմ՝ 9 հատ, տպագրություն՝ 18 հատ, ամրակցման դետալներ՝ 400 հատ, տրանսպորտ՝ 3 մեքենա, մեծ փազլի պատրաստում և աշխատանք՝ 1 հատ, փորձարկում և ամրացում	հատ	1	3,316,800	3316.8
4	**Շահումյանի անվան հրապարակի տեխնիկա և այլ ծառայություններ**				**975.0**
	Բեմ 5 մ x 3,8 մ, ձայն 20 կվ, ձայնային ռեժիսոր՝ 1 մարդ, տեխնիկական կազմակերպիչ՝ 2 մարդ, DJ՝ 1 մարդ. տրանսպորտ՝ 1 մեքենա, փոշե ներկեր եռագույնի գույներով՝ 30 կգ, ,փակ տարաներ և սեղաններ՝ 9 հատ	հատ	1	975,000	975.0
	Հանրապետության հրապարակի տեխնիկա և այլ ծառայություններ				**3520.0**

5	Ֆերմա ծածկով (7 մ x 7 մ)՝ 1 հատ, բեմ՝ 25 մ. քառ.,Լեդ էկրան՝ 10 մ. քառ., ձայն 20 կվ, լույս Beam՝ 18 հատ, լույս Wash՝ 24 հատ, ծուխ haze՝ 1 հատ, լուսային ռեժիսոր՝ 1 մարդ, լուսային ռեժիսորի օգնական՝ 1 մարդ, հաղորդավար՝ 1 մարդ, տեխնիկական սպասարկում, տրանսպորտ՝ 6 մեքենա, տեխնիկայի փոխադրում	հատ	1	3,520,000	3520.0
	Տոնական քայլերթի տեսանկարահանման և լուսանկարահանման ծառայություններ				**1610.0**
6	Մեքենա՝ 1 հատ, տեսախցիկներ՝ 4 հատ, փոխակերպիչներ՝ 6 հատ, բոնդինգ համակարգ՝ 2 հատ, Կետ-Կետ անտենա՝ 2 հատ, գիմբալ Movi M5՝ 1 հատ, դրոն (նեռարյալ փոքրնական թռիչք)՝ 2 հատ, մալուխներ, մարտկոցներ, կապ, օպերատոր՝ 4 մարդ, ինժեներ՝ 2 մարդ, հեռավար ռեժիսոր՝ 1 մարդ, մոնտաժային վահանակ+սերվեր, կառավարում, տեխնիկական սպասարկում և փոխադրում,լուսանկարչական ծառայություն	հատ	1	1,610,000	1610.0
7	**Այլ կազմակերպական ծառայություններ**				**1465.0**
	Տոնական ծրագրերի ռեժիսոր՝ 1 մարդ	հատ	1	800,000	800.0
	Ռեժիսորի օգնական՝ 1 մարդ	հատ	1	200,000	200.0
	Դիզայն՝ 1 մարդ	հատ	1	140,000	140.0
	Ձևավորում՝ 1 մարդ	հատ	1	190,000	190.0
	Կամավորների սննդի ապահովում (54 մարդ, յուր.՝ 2500 դրամ)	հատ	1	135,000	135.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**23704.3**
	ԱԱՀ*				**4740.9**
	ԱՄԲՈՂՋԸ				**28445.2**

*** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«ՄԵՆՔ» պետական և ազգային արժեքների հանրահռչակման հիմնադրամ
ք.Երևան, Արգիշտի փող., 7/4 շ., բն. 35
«Ամերիաբանկ» ՓԲԸ 1570023457320100
հվհհ 02646398, հեռ.՝ 093999390
Գլխավոր տնօրենի ժ/պ՝
Պ. Սարգսյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
« 03 » «07 » 2023 թ.
N ՄՇԴ-290-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«_____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«03» «07» 2023 թ.
N ՄՇԴ-290-2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀԿՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)
բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Գլխավոր քարտուղար՝
_____

Տնօրեն՝
_____

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝
_____